80. ԿԱՓՌԵԼ ՀՐԵՇՏԱԿԻ ՆԱՂԸԼԸ

Ախչարքիս պըտկին մին կեղ ա ինըմ, էս կեղըմն էլ մին չատ ախկադ, չըփլադ մարթ ո̈ւրա̈ օղլուշաղի հու օխտը տըրեկան խոխի հետ: Էն ղըդա̈ր քա̈սիբ ա ինըմ, որ քո̈ւլփա̈թովը թա̈ թորենի մեջ էլ քցիր, խնձրահոտ չէր վեր ինիլ: Էս քա̈սիբը տենըմ ա, որ էլ կարըմ չի ապրի, կեղիցը ծեռ ա քաշըմ, քինըմ աշկը ըշտեղ որ կըտրըմ ա: Շատ ա ման կա̈լիս, թա̈ քիչ, էտ էլ ինքը կըգիդա̈, էլի տենըմ ա, որ ջիբը մին շա̈հի էլ ա ընգնըմ չի, ուզըմ ա ո̈ւրա̈ կլո̈ւխը բաղի տա: Հենց հըսնըմ ա մին ծովի ղըրաղ, ասըմ ա՝ էլ ստեղից սամթին տեղ կարալ չեմ ճարիլ: Պըցըրանըմ ա մին քերծի կլո̈ւխ, ուզըմ ա ո̈ւրա̈ն քըցի ծովը, բո̈ւրդա̈ն մին ուրիշ մարթ ա տո̈ւս կալիս հու ըստրան ասըմ ա.

—Ա՛յ Ասսու կա̈ռ, բա էս վախտ ծովըմը կըլըղանա՞ն, որ տո̈ւ ուզըմ ես լըղանալ:

Ախկադը անծանոթին պատմըմ ա ո̈ւրա̈ կլխին եկածը, վերջն էլ, թա̈՝ բա ասիլ չես, ուզըմ ի հեխտվի, պըծնի էս զուլումաթ ախչարքիցը:

Անծանոթը, որ ծո̈ւկ փռնող ա ինըմ, ասըմ ա.—Շատ պա̈ն հա̈լա̈մ փորցել չես, եկ խոսկիս անգա՛ճ տիր, քինանք ո̈ւրո̈ւր հետ ծո̈ւկ փըռնենք: Իշքան բախտերնիս պերի, հալալ ախպոր պես ճոթ անենք:

Ըտենց էլ անըմ են: Խելա̈ք ծո̈ւկ են փըռնըմ, տանըմ բազարըմը ծախըմ, փողը ճոթ անըմ:

Համա ծո̈ւկ փռնողը ո̈ւրա̈ փա̈յի կեսն էլ ա տալիս ախկադին ու ասըմ.—Ախպորըս ասեմ, որ տո̈ւ ես, ոտըտ խերով էր, ես իմ գյանքըմը հա̈լա̈ էս ղըդա̈ր ծո̈ւկ փըռնած կամ ոչ: Եկ մին քանի վախտ ինձ օքնի:

Սըհենց մին խելա̈ք վախտ ծո̈ւկն են փռնըմ ծախըմ, փողը չորս տեղ պըժա̈նըմ, մինը ծո̈ւկ փըռնողն ա վեր ունըմ, իրեքը տալիս հընգորը: Եփ օզգա̈-բաբաթ փող ա վհաքվըմ, ախկադըս ծո̈ւկ փըռնողին մնաս պարով ա ասըմ հու թո̈ւշ կալիս ա ո̈ւրա̈ տունը:

Կնիկը, որ տենըմ ա մարթի ծեռի փողը, յախիցն ա կըպնըմ, թա մեր խոխան օխտը տրեկան ա, համա սուրփ մեռոնով մըկըրտված չի, դե որ էսքան փող ես ախչադել պեր մհիկ կնքենք:

Հեխճը տաւս ա կալիս կեղամեչ, պայց ում խնթրըմ ա կընքահեր տանոնա, ոչ մինը ռազի չի կենըմ: Դե ով ա տեսել, որ տանոտակ ախոռին էչ զըռռա: Զիմն էլ գիդըմ են, թա ինչ օրի ա էտ ախկադը, ըտրա մհար էլ դաբուլ չեն ինըմ կընքահեր տանոնալի: Քասիբն էլ ռիսկ չի անըմ, որ ասի, թա խելաք փող ունի, վախնըմ ա վրեն ծիծաղեն, ծեռ առնեն, յա չանռի կապեն, թա կաղացել ես: Սըհենց քոռ ու փաչմանն ճընապա յա ընգնըմ հըրևան կեղը, ինչ ա թա ընդեղից կընքահեր ճարի:

Ճընապին առաչն ա տաւս կալիս մին սիպտակ մըրքավոր, հաքին ծալ-ծալ չալի չաներ, հըրցնըմ ա, թա հա՞ւր ա ըտենց վռազ-վռազ քինըմ: Ախկադըս մին-մին պատմըմ ա՝ սհենց ու սհենց, խոխիս մին կընքահեր ա պետկը:

Սիպտակ մըրքավորը ասըմ ա.—Ես քեզ կընքահեր, ե՛տ տանռ, քինանք:

—Բա տաւ օ՞վ ես:

—Ես Աստոծն եմ:

—Թա տաւ իսկականիցը Աստոծն ես, ես խի՞ եմ էս հալին: Զէ տաւ ինձ կընքահեր կարալ չես ինիլ, քինա՛ պանիտ,—ասըմ ա ախկադը, ըստան թողըմ, ճընապա ընգըմ:

Քիչ եդո, էլհամ մին սև մըրքավոր ա տաւս կալիս առաչը, էլհամ հըրցնըմ ա թա հա՞ւր ա քինըմ, ինչի մհար, եդով ասըմ ա.—Ես քեզ կընքահեր, ես Քրիստոսն եմ, ետ տանռ, քինանք:

Ախկադըս ոտեն-կլոխ չափըմ ա սև մըրքավորին եդով ասըմ.—Քու հորիցն ինչ օքութ եմ ստացել, որ քեզանից ինչ խեր ստանամ: Քինա՛ պանիտ: Ախչարքի մարթիքը հու կլխիցս պրծան ոչ:

Մին խելաք տեղ քինալեն եդը թազադան մին մարթ ա տաւս կալիս առաչը: Տու մի ասիլ, էտ էլ Կափռել հրեչտակն ա ինըմ:

Հալը-հարցըմ անիլից եդով, որ գիդըմ ա ախկադի հուր քինալը, ինչի մհար քինալը, ասըմ ա.—Էլ ինչի մհար ես չըրչարվըմ, ես կըտառնամ կընքահեր, թա քեզ մհար դաբուլ չեմ:

—Զէ՛, Կափռե՛լ հրեչտակ,—ասըմ ա ախկադը,—ախչարքիս իրեսին քեզանա դաւզ մարթ կա ոչ, ո՛չ հարուստ ես ճընանչըմ, ո՛չ ախկադ, չիմմի հոքին էլ հանըմ ես, չիմմին էլ մին աչկով ես եչըմ: Ղաբուլ ես:

Ախկադի խոսկը Կափռել հրեչտակին չատ ա տուր կալիս: Ուրաւր հետ կալիս են կեղն, ու հրեչտակը տանոնըմ ա խոխի կընքահերը: Եփ նստըմ են հաց ուտիլի, Կափռել հրեչտակը օջաղիցը

մին պՅուռը քՅուլ ա վեր ունում, լըցնում ա մին կուճի քիսի մեչ, տալիս սանահորը, թՅ՝ լՅ՛վ պահի:

Հենց որ լսես, թա մեծատուն մարթկանցիցը միննն ու մինը հիվանդ ա, էս քիսեն վե կունես, կը քինՅս ակը տալի: Ես ընդեղ եմ ինիլու հու մինակ քու աչկին եմ իրևալու: Հենց որ տենաս կլխի ղոլին եմ կաղնած, կըթողաս կըքինՅս, համա որ ոտերի ղոլին կաղնած ինեմ, չիմմին տՅուս կանես, քիսեն կըհանես էրկու անքամ կըկրպցընես հիվանդի պռոշներին, էն սհաթին սրղանալու յա: Հա՛մ մարթկանց աչկին լավ հՅաքիմ կիրևաս, հա՛մ էլ խելՅաք փող կըտան քե, կարքին դրոըլմիչ կինես:

Ասըմ ա, ասըմ չի, բՅուրդան համփարցվըմ ա:

Օրերիցը մին օր էլ թաքավորի մինըճար ախճիկը նախոչանըմ ա: Իչքան լողման հՅաքիմնի են ինըմ վըհաքվըմ են, խելք խելքի են տալիս, համա կարըմ չեն, թՅ մին ճար էլ ա անեն: Էս խՅաբՅարը, որ ախկադը լսըմ ա, քիսեն վեր ա ունըմ քինըմ: Թաքավորին դՅույՅուղ են անըմ, թՅ մին հՅաքիմ ա լիս ախչարք ընդել, ասըմ ա, որ ախճըկանըտ տենա, կըկարա մին ճար անի:

Տանըմ են թաքավորի ախճկա կուչտը: Ախկադ հՅաքիմըս տենըմ ա, որ Կափռել հրեչտակը հեսա ոտերի ղոլին կաղնած, կարքադրըմ ա, որ չիմմը տՅուս կՅն, ոչ մինը մնա ոչ, անքամ թաքավորն էլ պիտի տՅուս կՅ, որ ինքը կարա հիվանդին սըղըցնի: Չիմմունքը որ տՅուս են կՅլիս, էս սուտ հՅաքիմըս էն մընուտին քիսեն հանըմ ա, էրկու անքամ կըպցնըմ ախճկա պռոշներին: Էն դՅաստի նախոչը, որ խելՅաք վախտ ո՛չ ուտըմ, ո՛չ էլ խմըմ է, տեղիցը վեր ա կենըմ, կՅանգՅտվըմ, թՅ սոված ա:

Թաքավորը, որ ախճկանը ոտի վրՅ յա տեսնըմ, ախչարքովը մին ա տՅռնըմ, խՅազնիցը մին խուրջին ոսկի յա տալիս ախկադիս, թաքավորին վայել հՅուրմՅաթ ա անըմ, նոր ճընապա տինըմ:

Մին-էրկու տարի որ անց ա կենըմ, հըրևան թաքավորի ախճիկն ա տափովը կՅլիս: Ինչ ղրդՅր անըմ հանած հՅաքիմ ա կՅլիս, իչքան կլՅխ են կոտրըմ, կարըմ չեն ախճկա ցավը գիդՅն, ո՛չ ուտըմ ա, ո՛չ խմըմ, ո՛չ էլ խոսըմ, օր օրի վրեն մումի պես հալվըմ ա, պարակըմ: Ճար անողին թաքավորը խոստանըմ ա ոսկու մեչին լըղըցնի, էլհա թահըր չի ինըմ:

Վերչը թաքավորը մարթ ա ղըրկըմ հըրևան թաքավորի կուչտը, թՅ՝ հալղազիա պետմա քու հՅաքիմին ղըրկես, որ իմ ախճկանն էլ ճար անի:

Թաքավորն էլ ախկադիս վեր ա ունըմ ղըրկըմ:

Սուտ հՅաքիմս ամարաթն ա մընընըմ, թՅ չէ, տենըմ ա, որ Կափռել հրեչտակը կաղնել ա կլխի ղոլին: Սուսըփուս տուս ա կՅլիս

թա̈քավորին ասըմ, թա̈ որ ուզըմ ա ո̈ւրա̈ ախճիկը ապրի, թո չորս ազրայիլ տղերքի ղըրկի կուշտը, վե կալեն շուռ տան ընդհենց, որ շտեղ կլո̈խն ա իլել, ոտերն ինի:

Տղեքը ախճկանը շուռ են տալիս թա̈ չէ, ախկադըս քիսեն կպցնըմ ա հիվանդի պերանին: Հիվանդը տեղը նստըմ ա:

Էս թա̈քավորն էլ ա մին խուրջին ոսկի տալիս, օխտը օր, օխտը քշեր ըսրան պահըմ ա եղը-մեղըրի մեչ, եդո պադվով ճընապա քցըմ: Ամարաթիցը հենց տո̈ւս ա կա̈լիս, թա̈ չէ, կընքահերը կըպնըմ ա յախիցը:

—Պելի՛, բա խոսկ չիր տվել, որ ինձ կլխի ղոլին տենալիս, մոտ չը կա̈ս:

—Խոսկ եմ տվել, տղամարթի մնան էլ խոսկիս կաղնած եմ: Կընքահե՛ր, բա տու ոտերի ղոլին չի՞ր:

—Ախր ախճկանը շուռ ին տվել:

—Դե տո̈ւ էլ շո՛ւռ կիր, էլի: Թա̈ տո̈ւ ես սխալվել, թա̈ ես մին ա, խընթրըմ եմ ներող ինես, ըստանա եդով էլ ըտենց պա̈ն ինիլ չի:

Էս խաթիցն էլ որ պըրծնըմ ա, ա̈խկադ հա̈քիմս ճընապա յա ընգնըմ տուն:

Առոք-փառոք ապրըմ են, տունը-տեղը լիքը, սըրտերնին պա̈ց, համա օրերը թա̈յդի-թա̈յդի աս են կենըմ: Մին խելի վախտից եդը մին ղա̈չա̈նգ օր Կափռել հրեշտակը կա̈լիս ա ո̈ւրա̈ սանիկին տենալի:

Կընքահորը թա̈քավորին վայել հո̈ւրմա̈թ են տալի, մին ղոլիցը մարթը, մին ղոլիցն էլ սանամերը խընթրըմ են.—Էս մին թիքեն էլ կե՛ր, էս ամանի մեղըն էլ անո՛ւշ արա, գիդա՛, թա̈ քու հալալ մալն ա:

Վերչը Կափռել հրեշտակը մնաս պարով ա անըմ, որ քինա̈, սանահերն ասըմ ա.—Կընքահե՛ր, բա ինիլ չի, որ մին օր էլ մենք կա̈նք քե ղոնաղ, խի տո̈ւ հո̈ւրմա̈թից վախնող մարթ ե՞ս:

—Չէ՛,—ասըմ ա կընքահերը,—հո̈ւրմա̈թից վախնող չեմ, համա տունս շատ հեռուվա, համ էլ ես երգնային հոքի եմ, տո̈ւք՝ հողեղեն, վախըմ եմ՝ տունս տուրերնիտ կա̈ ոչ: Քանիչ որ մինակ մին մարթ կարամ տանեմ, ծեզանից ով ուզըմ ա, թո կա̈, աչկիս վրեն տեղ ունի:

Սանահերը նստըմ ա կընքահոր շըլա̈կին հու թռնըմ են երգինք: Հըսնըմ են հրեշտակի տունը: Սանահերը որ ղոլը եշըմ ա, մինակ շո̈ւշից շինած ըրհաթիք ա տենըմ, ճրով լիքը: Ամման մինիցն էլ ճո̈ւր ա, որ կաթ-կաթ վեր ա ընգնըմ:

Հըրցնըմ ա.—Կընքահե՛ր, էս ի՞նչ ըրհաթիք են, իլա̈ծ-չիլա̈ծը հենց ըստա՞նք են:

—Հա՛, սանահե՛ր, ըստանք են,—ասում ա հրեշտակը: Ըստանցից ամման մինը մարթու հոքի են: Հենց որ ոըհաթոց մեչի ճուրը կաթ-կաթալով թափվում ա, պըրծնում, քինում եմ հոքին առնում:

—Բա իմ հոքին ո՞րի մեչին ա, կարալ չե՞մ տենամ:

—Հենա յէ, էն ղրաղինը, որ մեչին սաղիցը քիչ ճուր ա մնացել, էն ա քու հոքին:

Սանահերը, որ ուրա հոքու տեղը գիդըմ ա, կողնուկ մին քիչ ճուր ա լցնում ոըհաթու մեչը:

Ետ տառնալեն եդը արխային սկսում ա, ուրա մհար ապրիլը:

Էս պանը Աստու սըրտովը չի ինում: Կանչում ա Կափռել հրեշտակին, թա էս ախկադը խի ա էսքամ վախտ ապրում, եփ ուրա թայըթուչ էլ մարթ չի մնացել սաղ:

—Դե ոնց անեմ, Տե՛ր Աստոծ, ոըհաթըմը հալում ճուր շատ կա:

—Ոըհաթի-մհաթի չեմ գիդըմ, ճուր կա, կա ոչ, իմ կոռծը չի, քինա հոքին ա՛ռ:

Կափռել հրեշտակը թազադան կալիս ա սանահոր կուշտը հու ասում Աստու ուզածը:

—Այ ըտենց Աստու վիզը կոտրվի, հա՜,—ասում ա սանահերը,—բա ըտրա աչկերը չտեղ էր էն վախտը, եփ սոված սատկում ի, խի չէր հոքիս առնիլ տալիս, մհի որ կարքին-մարթավարի ապրում եմ, նոր եմ միտն ընգե՞լ: Դե ոչինչ, որ ըտենց ա, թո մին աղոթկ կարթամ, համա մինչև պրծընեմ ոչ, խո՛սկ տու, որ հոքիս առնիլու չես:

Հրեշտակը խոսկ ա տալիս: Սանահերն էլ ասում ա՝ հանուն հոր և որթուն, ու սաստը կըտրըմ ա:

Կափռելը շատ ա սպասում, որ աղոթկը պրծնի, հոքին առնի, համա սանահերն ասում ա.—Էս դոնրմը էսքանքը բոլ ա, եփ պրծընեմ, էն վախտը կը կաս: Տղամարթի խոսկը խոսկ ա:

Խելաք վախտ որ անց ա կենում, Աստոծ էլհամ ա կանչում հրեշտակին ու վրեն աջըղվում, թա խի՞ չես էն ախկադի հոքին առնում:

Հրեշտակը նըստում ա պատմում կլխին եկածը, եդո էլ, թա խոսկ եմ տվել էլ կարում չեմ խոսկիցս տուս կալ:

Աստոծ խելաք միտկ ա անում, ծանդըր ու թիթև անում, թա ինչ պիտի ասի, եդո մին քանի խրատ ա տալիս Կափռելիս հու ճընապա տինում:

Կափռելս էլ կալիս ա սանահոր կեղի կշտին վեր կալիս, տառնում մին ջահիլ տղա, մին մեյիդ էլ չինում ա, տինում կշտին հու սպասում, թա սանահերը եփ ա չալիցը տուն տառնալու:

Հենց սանահերը իրևում ա թա չէ, Կափռելըս սկսում ա լաց ինիլը:

Սանահերը հըրցնում ա.—Ա՛ խոխա, խի՞ ես լաց ինում:

—Բա ի՞նչ անեմ,—ասում ա,—հերըս մեռել ա, մին մարթ էլ ա

կա ոչ, որ հոքու փրգութունի մհար աղոթկ կարթա կլխին, եդո թաղեմ, քինամ իմ պանին:

Սանահերը սկսըմ ա. «Հանուն հոր և որթուն և հոքուն...», հենց որ պրծնըմ ա, հրեշտակը հըրցնըմ ա.—Ապե՛ր, աղոթկըտ պրծա՞ր, հու պան չե՞ս մոռացել:

—Ա՛ խոխա, պրծա:

Էս «խոխի» վրեն ջահիլը տառնըմ ա Կափռել հրեշտակ ու ասըմ.—Սանահե՛ր, վադետ թըմամել ա, մհի ի՞նչ ես ասըմ:

—Հա՛, էս անքամ մարջը տու տարար,—ասըմ ա,—համա քինանք տուն, նոր հոքիս ա՛ռ:

Ըստենց, մինակ Ասսու խրատով Կափռել հրեշտակը կարաց սանահոր հոքին առնիլ, թա չէ մհիկ էլ հալամ ապրըմ էր:

Աստո՛ծ, չիմմին էլ ըստենց խելքի զորութո՛ւն տուր, որ կարան ուրանցը գորա ախչարքըմըս ապրեն: